ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
01.04.2025 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ»*
հասարակական կազմակերպության 2024 թ. գործունեության մասին

| | | |
|---|---|---|
| **1. Հասարակական կազմակերպության՝** | | |
| 1.1 Լրիվ անվանումը | | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | 02511007 |
| 1.3 Գտնվելու վայրը | | ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՐԴԱՆԱՆՑ Փ. 18 |
| 1.4 Պետական գրանցման համարը | | 211.171.05364 |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | 2010-05-17 |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | +(374)000000 |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | lev00551@mail.ru |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | |
| Անունը<br>ՀԱՐՈՒԹՅՈՒՆ | Ազգանունը<br>ԽԱՉԱՏՐՅԱՆ | Պաշտոնը<br>Նախագահ |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | |
| Հայաստանի Հանրապետությունում կինոոլորտի բոլոր ուղղությունների զարգացման համար նպաստավոր պայմանների, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծմանն աջակցելը, կինոմիջավայրի և ստեղծագործական մթնոլորտի ձևավորմանն օժանդակելը, կինոյի հանրայնացմանն ու քարոզչությանը միտված գործունեությանը նպաստելը: | | |
| Պետության կողմից տարվող մշակութային, մասնավորապես՝ կինոքաղաքականության հայեցակարգային ծրագրերի ստեղծմանն ու մշակմանը մասնակցային կերպով աջակցելը, ոլորտային օրենքների և որոշումների, իրավական այլ ակտերի ստեղծման գործում կինոգործիչների մասնակցայնությանը նպաստելը, այդ մասին նրանց մշտական տեղեկատվության ապահովումը, ինչպես նաև կինոգործիչներին մտահոգող հարցերը և 4 պետության կողմից վարվող կինոքաղաքականության վերաբերյալ նրանց կարծիքները պետական մարմիններին ներկայացնելը: | | |
| Նպաստել և աջակցել հայկական կինոյի՝ որպես ազգային մշակույթի կարևոր բաղադրիչի, որն ունի համազգային և միջազգային նշանակություն, մաս է կազմում մշակույթների երկխոսության, ժողովուրդների միջև փոխգործակցության և փոխըմբռնման, բոլոր ժանրերի և տեսակների զարգացմանն ուղղված քայլերին: | | |
| Նպաստել և աջակցել կինոոլորտում կառուցվածքային փոփոխությունների և զարգացման ռազմավարությունների, նպատակային ներդրումային քաղաքականության մշակմանը իրագործմանը, նորարարական գաղափարների ներդրմանը, կինոոլորտի արդիականացմանը, մրցունակ կինոարտադրանքի թողարկմանը, միջազգային կինոինդուստրիայում Հայաստանի կինոոլորտի, ազգային ֆիլմի ինտեգրմանը, առաջխաղացմանը: | | |
| Օրենքով սահմանված կարգով աջակցել Միության անդամների սոցիալական, քաղաքացիական, մասնագիտական, աշխատանքային, հեղինակային և խառը իրավունքների, ինտելեկտուալ սեփականության և օրինական շահերի պաշտպանությանը, ստեղծագործական գործունեության համար պայմանների ստեղծմանը և բարելավմանը: | | |
| Նպաստել պրոֆեսիոնալ շահերի պաշտպանության շուրջ կինոոլորտի մասնագետների համախմբմանը, ըստ մասնագիտությունների պրոֆեսիոնալ գիլդիաների ստեղծմանը (Գիլդիաների գործունեության կանոնները, կանոնակարգերնու կարգերը սահմանվում են Վարչության կողմից), նրանց միջև ստեղծագործական կապերի ամրապնդմանը և զարգացմանը: | | |
| Իր կանոնադրական նպատակների իրագործման, ինչպես նաև կինոյի քարոզչության, հանրայնացման նպատակով նպաստել և աջակցել փառատոների, ստուգատեսների, կոնֆերանսների, ստեղծագործական հանդիպումների, ֆիլմերի դիտումների և քննարկումների, կոնգրեսների, սիմպոզիումների, սեմինարների, ժողովների, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, տոնավաճառների, շուկաների կազմակերպմանը, անհրաժեշտության դեպքում կազմակերպել այդպիսիք: | | |
| Միության և/կամ այլ կազմակերպություններից ներգրավված միջոցներով ինքնուրույն և/կամ համատեղ ձեռնարկել միջոցներ՝ ապահովելու համար սոցիալական, տնտեսական, ֆինանսական, այլ անհրաժեշտ պայմաններ  ի շահ Միության և նրա անդամների ստեղծագործական բնականոն գործունեության, իրականացնել Միության անդամների կարիքների աջակցությանն ուղղված սոցիալական ծրագրեր. (Սոցիալական ծրագրերի իրականացման կանոնները, կանոնակարգերն ու կարգերը սահմանվում են Վարչության կողմից): | | |
| Պետական համապատասխան կառույցների հետ գործակցությամբ նպաստել և աջակցել կինոֆոնդի, կինոժառանգության պահպանման, ընդլայնման, հանրայնացման խնդիրների լուծմանը: | | |
| Նպաստել հայկական կինոարտադրանքը, հայկական կինոժառանգությունը, ազգային ֆիլմերը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս կազմակերպվող փառատոներում, ստուգատեսներում և այլ համապատասխան միջոցառումներում ներկայացնելուն, անհրաժեշտության դեպքում ներկայացնել դրանք: | | |
| Նպաստել և աջակցել կինոփառատոնային շարժման կայացմանը, ընդլայնմանը և զարգացմանը Հայաստանում, իր հնարավորությունների սահմաններում աջակցել հայաստանցի կինոգործիչների մասնակցությանը միջազգային փառատոներում, ստուգատեսներում, մրցույթներում, այլ միջոցառումներում: | | |

Digitally signed by
MIKAYELYAN ARMINE
7201910337
Date: 2025.05.27
11:04:46 AMT

| |
|---|
| Նպաստել և աջակցել Միության, Միության անդամ կինոգործիչների միջազգային կապերի ձևավորմանը, զարգացմանն ու ընդլայնմանը, տեղեկատվական և ստեղծագործական փոխանակություններին, միջազգային փոխանակություններին կինոոլորտում, դրանցում ներգրավել միջազգային համբավ ունեցող կինովարպետների ծանոթանալու նոր տեսալսողական, տեխնոլոգիական կինոպրոցեսներին, կազմակերպել և ուսումնասիրել նոր, առաջավոր փորձը, նոր տեխնոլոգիական լուծումները: |
| Նպաստել տեսալսողական արտադրանքի ստեղծման, տիրաժավորման, տարածման և իրացման նախագծերի կայացմանը, աջակցել և նպաստել դրանց իրականացմանը: |
| Ստեղծել ակումբներ՝ հայկական կինոյի, կինոժառանգության, ազգային ֆիլմերի աջակցության և հանրայնացման համար ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, անցկացնել շնորհանդեսներ, այլ միջոցառումներ, գովազդել անցկացվող միջոցառումները: |
| Նպաստել և աջակցել կինոոլորտի մասնագիտությունների ստեղծագործական դպրոցների, կուրսերի, խմբերի, հոսքերի, առաջխաղացման խմբերի հիմնմանը և ստեղծմանը, անհրաժեշտության դեպքում հիմնել և/կամ ստեղծել այդպիսիք: |
| Իր միջոցներով և/կամ այլ մասնակցությամբ հնարավորինս աջակցել Միության երիտասարդ անդամներին, կինոոլորտում ընդգրկված ուսանողներին՝ անցնելու կրթական, ստեղծագործական վերապատրաստման, որակավորման, մասնագիտական գիտելիքների կատարելագործման գործունեություն օտարերկրյա կինոկրթական հաստատություններում: |
| Իր բոլոր կարողություններով աջակցել երիտասարդ կինոգործիչներին, նպաստել երիտասարդական կինոյի, երիտասարդական հարթակների զարգացմանը, երիտասարդ ստեղծագործողների համախմբմանը, նրանց նախաձեռնությունների առաջխաղացմանը: |
| Նպաստել և աջակցել ֆիլմերի, սցենարների, օպերատորական, ռեժիսորական, դերասանական և այլ կինոմասնագիտությունների գծով մրցույթների անցկացմանը, անհրաժեշտության դեպքում անցկացնել այդպիսիք, իր միջոցներով և/կամ այլ կազմակերպությունների հետ համապատասխան պայմանագրերի կնքմամբ իրականացնել հրատարակչական, լրատվական, տեղեկատվական, քարոզչական, գովազդային, հանրային կապերի զարգացմանն ուղղված գործունեություն: |
| Համագործակցել մշակութային, ստեղծագործական միությունների, կազմակերպությունների հետ: |
| Ներկայացնել Միության և իր անդամների շահերը պետական և հասարակական կազմակերպություններում, տարբեր ատյանի դատարաններում: |
| Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Միությանը պատկանող հիմնական միջոցների, գույքի պահպանման համար: |
| Օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ կինոոլորտի, Միության անդամների իրավունքների և շահերի պաշտպանության հարցերին վերաբերող նորմատիվ-իրավական ակտերի նախապատրաստման և ընդունման մասին, Միության շրջանակներում հիմնել և շնորհել մեդալներ, Միության Պատվավոր անդամի տիտղոս՝ համապատասխան վկայագրով, այլ մրցանակներ, շքանշաններ, պարգևներ, խրախուսման այլ միջոցներ, սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնել Միության անդամներին պետական պարգևներ և պատվավոր կոչումներ շնորհելու մասին: |
| Ներգրավել հայ և օտար ներդրողների՝ Միության նախագծերի և ծրագրերի իրականացման համար: |
| Իր ծրագրերի իրագործման նպատակով մասնակցել կինոտեսասրահների, կինոկենտրոնների, կինոակումբների, կինոթատրոնների, այլ կինոկառույցների կազմակերպմանը, հիմնադրմանը: |
| Իրականացնել օրենսդրությամբ չարգելված տարաբնույթ այլ ծրագրեր: |
| Նախաձեռնել և մասնակցել մշակութային քաղաքականությանը, կինոոլորտին վերաբերող օրենքների, ոլորտային այլ օրենքների, նորմատիվակտերի մշակման և քննարկման աշխատանքներին, անցկացնել կինոոլորտում Միության կանոնադրական նպատակներին վերաբերող օրենքների և օրենսդրական ակտերի նախագծերի, այլ ծրագրերի և նախագծերի հասարակական անկախ փորձաքննություն (էքսպերտիզա): |

| **4 Հասարակական կազմակերպության՝** | |
|---|---|
| 4.1 Անդամների թիվը | 147 |
| 4.2 Կամավորների թիվը | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | 1 |

**6. Իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| 1 | Կինոյի տան ցուցասրահում բացվեց փարաջանովյան մեծ ցուցահանդես՝ ներկայացնելով հետաքրքիր ստեղծագործող Դավիթ Գալստյանի «Ջոկոնդա. կերպափոխումներ» ցուցադրությունը | Հայաստանի կինոգործիչների միության | Փարաջանովյան ժառանգության հանրայնացում | Ավարտված |
| 2 | Կինոյի տան մեծ դահլիճում ցուցադրվել են Փարաջանովի ինչպես նաև ռեժիսորներ Սերժ Ավեդիքյանի և Ալյոնա Ֆետիսովայի «ՓԱՐԱՋԱՆՈՎ» ֆիլմերը: | Հայաստանի կինոգործիչների միության | Փարաջանովյան ժառանգության հանրայնացում | Ավարտված |
| 3 | Հայաստանի կինոգործիչների միության Կինոյի տան «ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԵՄԱՏԵՔ» կինոթանգարանում ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ, «ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏՐՈՆԻ ԵՎ ԿԻՆՈՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»-Ի և «Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»-Ի միջև: | Հայաստանի կինոգործիչների միության | աջակցություն ուսանողական կինոյին | Ավարտված |
| 4 | Կինոյի տան մեծ դահլիճում կինոյի Մեծ Վարպետ ԱՐՏԱՎԱԶԴ ՓԵԼԵՇՅԱՆԻ մասին պատմող՝ ռեժիսոր ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ «ԲԱՑԱԿԱ ՊԱՏԿԵՐ» ֆիլմի առաջին ցուցադրությունը: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 5 | Կինոյի տան մեծ դահլիճում Հայաստանի կինոօպերատորների գիլդիան ներկայացրեց «ԱՊՐՈՒՄ ԵՄ ԻՆՉՊԵՍ ՆԿԱԳՈՒՄ ԵՄ. ՄԱԼԽԱՍ» ֆիլմը որպես առաջին ցուցադրություն: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | Կինոյի տան մեծ և փոքր դահլիճներում՝ Վալերիո Զուրլինիի «ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՆԱՊԱՏԸ», Ալեքսանդր Արխանգելսկու և Տատյանա Սորոկինայի «ՀԱՅՐԵՆԻՔ ՄԻԱՅՆ ԿԻՆՈՅՈՒՄ», Էրիկ Բուադելլայի «ԹԱՄԱԴԱ» ֆիլմերի ցուցադրություն: | Հայաստանի կինոգործիչների միության | համաշխարհային կինոժառանգության հանրայնացում | Ավարտված |
| 7 | Իննա Սահակյանի «ԱՎՐՈՐԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՑԸ» ֆիլմի բացառիկ ցուցադրություն: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոյի հանրայնացում: | Ավարտված |
| 8 | Իսպանական ֆիլմերի ցուցադրություն, Եվրոպական կինոյի փառատոնի կազմակերպում: | Հայաստանի կինոգործիչների միության | համաշխարհային ինոժառանգության հանրայնացում | Ավարտված |
| 9 | Կինոռեժիսոր ԷԴԳԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՊՐՈԴՅՈՒՍԵՐՈՒԹՅԱՄԲ՝ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ 5 ՖԻԼՄԻ՝ ռեժիսորներ՝ Թամարա Աբաջյանի, Գևորգ Շարամբեյանի, Սերժ Գաբյանի, Արամ Շահբազյանի, Վահան Գրիգորյանի ֆիլմերի ցուցադրություն | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական նոր կինոյի հանրայնացում, կինոկրթության և ժամանակակից կինոյի համադրություն: | Ավարտված |
| 10 | Ուսանողների կուրսային աշխատանքների հանրային դիտում և քննարկում: | Հայաստանի կինոգործիչների միության | ուսանողական կինոյի զարգացում: | Ավարտված |
| 11 | Հայաստանի կինոգործիչների միության և «Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան»-ի միջև նույնպես ստորագրվեց ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ, որը ստորագրեցին միության նախագահ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ և համալսարանի Մեդիայի, գովազդի և կինոյի ինստիտուտի տնօրեն ԿԱՐԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոկրթության զարգացում: | Ավարտված |
| 12 | Դպրոցականների, ուսուցիչների, ծնողների մասնակցությամբ Կինոյի տանը Հայոց Ցեղասպանության թեմայով լավագույն հայկական ֆիլմերից մեկի՝ կինոռեժիսոր ՎԻԳԵՆ ՉԱԼԴՐԱՆՅԱՆԻ «ԱՊՐԻԼ» ֆիլմի դիտում և քննարկում, որին մասնակցել են 20-ԻՑ ԱՎԵԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ և ԱՎԱԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՈՒՐՋ 300 ԱՇԱԿԵՐՏՆԵՐ Երևանից և Հայաստանի մարզերից: | Հայաստանի կինոգործիչների միության | հայ ժողովրդի պատմության կինոէկրանավորման ծանոթացում և հայկական կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 13 | ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 75 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ աշակերտների, ծնողների և ուսուցիչների հանդիպում հայտնի դերասանուհի ԱՆԱՀԻՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ հետ: | Հայաստանի կինոգործիչների միության | Հայկական կինոյի միջոցով ճանաչում մեր մշակութային գործիչների: | Ավարտված |
| 14 | ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ 125 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ՌԵՖԼԵՔՍԻԱՆԵՐ ԸՍՏ ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ» ՄԵԾԱԾԱՎԱԼ ԿՐԹԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ կինոցուցադրումներով, վիդեո արթ ինստալիացիաներով, որին մասնակցեցին մի քանի հարյուր դպրոցականներ Երևանից և Հայաստանի մարզերից, արվեստագետներ, ստեղծագործողներ: | Հայաստանի կինոգործիչների միության | կրթական և մշակութային նախագծերի զարգացում: | Ավարտված |
| 15 | ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ 125 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ» ՄԵԾԱԾԱՎԱԼ ԿՐԹԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ՝ կինոցուցադրումներով, վիդեո արթ ինստալիացիաներով, որին մասնակցեցին մի քանի հարյուր դպրոցականներ Երևանից և Հայաստանի մարզերից, արվեստագետներ, ստեղծագործողներ: | Հայաստանի կինոգործիչների միության | կրթական և մշակութային նախագծերի զարգացում: | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐԻ 125 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ, նախագիծ, որը դարձավ ժամանակակից արվեստի արվեստային ակտ: | Հայաստանի կինոգործիչների միության | կրթական և մշակութային նախագծերի զարգացում: | Ավարտված |
| 17 | ԿԻՆՈԴԻՏՈՒՄ-ԶՐՈՒՅՑՆԵՐԻ նոր ծրագիր 6-12-րդ դասարանների դպրոցականների համար՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՆ խորագրով: | Հայաստանի կինոգործիչների միության | կրթական և մշակութային նախագծերի զարգացում: | Ավարտված |
| 18 | ԳԵՈՐԳԻ ՅԱՐԱԼՅԱՆԻ ԲԱՑԱՌԻԿ ԿԻՆՈԵՐԳԻԾԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄ: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 19 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ հարգանքի տուրքի մատուցում հայ կինոյի լեգենդար անուններից ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈԴՊՈՄՈԳՈՎԻ ծննդյան 100-ամյա հոբելյանին: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 20 | «ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԵՄԱՏԵՔ» ԿԻՆՈԹԱՆԳԱՐԱՆԻ ՖՈՆԴԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄ ԲՈԼՈՐ այն ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ, որոնք պահանջվում են թանգարանային հաստատությունների համար՝ ձեռք բերելով ջրադիմացկուն և թղթի պահպանման համար ստվարաթղթե արկղեր | Հայաստանի կինոգործիչների միության | կինոենթակառուցվածքների զարգացում: | Ավարտված |
| 21 | ՆՈՐ ՀԱՄԱԼՐՈՒՄՆԵՐ «ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԵՄԱՏԵՔ» ԿԻՆՈԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ: Ի թիվս այլ թանգարանային նյութերի, պահոցի համալրում անվանի հայ բանաստեղծ, արձակագիր, Խորհրդային Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, Արցախի Հանրապետության պետական մրցանակի դափնեկիր ՄԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆԻ անձնական իրերի հավաքածուով: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոենթակառուցվածքների զարգացում: | Ավարտված |
| 22 | «ԱՐԵՎՈՐԴԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻ ՖԻԼՄԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ: | Հայաստանի կինոգործիչների միության | համաշխարհային կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 23 | Կաննի միջազգային կինոփառատոնում ՆՈՐ ՁԱՅՆ մրցանակի, բազմաթիվ այլ մրցանակների ԱՐԺԱՆԱՑԱԾ ՖԻԼՄԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ: | Հայաստանի կինոգործիչների միության | համաշխարհային կինոժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 24 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆԸ, «ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԵՄԱՏԵՔ» ԿԻՆՈԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ «ՄԷԿ ԿԱԴՐ» կարճ ֆիլմերի միջազգային փառատոնԻ ԲԱՑՈՒՄ: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոյի հանրայնացում: | Ավարտված |
| 25 | Կինոյի տանը «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» միջազգային կինոփառատոնի բացում: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական և համաշխարհային կինոյի հանրայնացում, կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |
| 26 | Կինոյի տանը անիմացիոն ֆիլմերի և պատկերապատման «ՌԵԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆԻ բացում: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական և համաշխարհային կինոյի հանրայնացում, կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |
| 27 | ԿԻՆՈՅԻ ԵՎ ԹԱՏՐՈՆԻ ՄԵԾԱԳՈՒՅՆ ԱՐՏԻՍՏՆԵՐԻ հյուրընկալում ԿԻՆՈՅԻ ՏԱՆ «ԲՈՒԽԱՐՈՒ ՄՐԱՀԻ»-ում՝ ՔԵՎԻՆ ՍՓԵՅՍԻ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԵՅՆ, ՋԱՖԱՐ ՓԱՆԱՀԻ, ԹԱՐՍԵՄ ՍԻՆԽ և այլոք: | Հայաստանի կինոգործիչների միության | համաշխարհային կինոյի հանրայնացում, կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |
| 28 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԷԴԳԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ «ՅԱՇԱՆ ԵՎ ԼԵՈՆԻԴ ԲՐԵԺՆԵՎԸ» ֆիլմի առաջին ցուցադրության կազմակերպում և հանդիպում Բրեժնևի դերը մարմնավորած ՄԱՔՍԻՄ ՎԻՏՈՐԳԱՆԻ հետ: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |
| 29 | ՄԱՆԹԱՇՅԱՆՑ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ անդամների հանդիպում առաջին կին աշխարհի չեմպիոն, հանրահայտ ծանրորդ ՆԱԶԻԿ ԱՎԴԱԼՅԱՆԻ, նրա մասին նկարահանվող ֆիլմի ռեժիսոր ԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | Ուսանողական կինոյի ցուցադրություն «ԿԻՆՈՅԻ ՕՐԵՐ» ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԻՆՈՆ՝ ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԷԿՐԱՆԻՆ խորագրի ներքո: | Հայաստանի կինոգործիչների միության | աջակցություն երիտասարդական կինոյին: | Ավարտված |
| 31 | ՄԻՔԱՅԵԼ ՊՈՂՈՍՅԱՆԻ հոբելյանի կազմակերպում և նրա «ԱՄԵՆ ԻՆՉ ՃԻՇՏ Է» հոբելյանի ֆիլմի ցուցադրում | Հայաստանի կինոգործիչների միության | կինոմշակույթի զարգացում: | Ավարտված |
| 32 | Կինոյի տան մեծ դահլիճի ձայնային համակարգի կառավարման ԹՎԱՅԻՆ վահանակի տեղադրում: | Հայաստանի կինոգործիչների միության | կինոենթակառուցվածքների զարգացում: | Ավարտված |
| 33 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆ 2-ՐԴ ՀԱՐԿ ցուցասրահում Ժամանակակից արվեստի Գյումրի Արտ Վիք 3-րդ միջազգային փառատոնի ցուցահանդեսներից մեկի բացում: | Հայաստանի կինոգործիչների միության | հայ և համաշխարհային արվեստային նախագծերի համադրում: | Ավարտված |
| 34 | CYFEST 16-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ, ՄԵԴԻԱ ԱՐՎԵՍՏԻ CYFEST միջազգային փառատոնի մասանկիցների հանդիպում կինոյի տանը: | Հայաստանի կինոգործիչների միության | հայ և համաշխարհային արվեստային նախագծերի համադրում: | Ավարտված |
| 35 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆԸ կայացավ Ֆիլմարտադրության, ֆիլմերի ֆինանսավորման հայթայթման, ֆիլմերի տարածման խնդիրներին վերաբերող վարպետության դասեր՝ Նաննու կոլլեկտիվի, օօլիկ պրադուքթիոն-ի և Հայաստանի կինոգործիչների միության հետ համատեղ, մասնակցությամբ միջազգային փորձառություն ունեցող մասնագետների: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոարտադրության զարգացում: | Ավարտված |
| 36 | ԱՐՑԱԽՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԵՂԱՆ ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ԲԵՄՈՒՄ Հայաստանի կինոգործիչների միության փոքր դահլիճի Հենրիկ Մալյանի անվան թատրոնի բեմը սիրով տրամադրեցինք Արցախցի փոքրիկներին ներկայացնելու իրենց ՎԱՐԱ, ՊԱ ՍՏԻ ՊԵՆ ԿԻՆԻ՞ բեմադրությունը: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական մշակութային ժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 37 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԲԵՄՈՒՄ եղավ ԱՐՑԱԽԻ ՋԱԶ ՆՎԱԳԱԽՈՒՄԲԸ, արցախցի ստեղծագործողների գործերը ցուցադրվեցին «ԱԶԳԱՅԻՆ ՍԻՆԵՄԱՏԵՔ» ԿԻՆՈԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ և այլն: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական մշակութային ժառանգության հանրայնացում: | Ավարտված |
| 38 | ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ ԿԱՅԱՆԱՑԱՎ երևանյան ամենակարևոր՝ իրադարձություններից մեկը՝ ՏեդեքսԵրևան-ը: | Հայաստանի կինոգործիչների միության | աջակցություն կրթական և մշակութային միջավայրերին: | Ավարտված |
| 39 | Կայացավ Հայաստանի պրոֆեսիոնալ կինոգիլդիաների նախագահների հանդիպում, որի ընթացքում քննարկվեցին պրոֆեսիոնալ կինոգիլդիաների աշխատանքների հետ կապված մի շարք հարցեր: | Հայաստանի կինոգործիչների միության | հայկական կինոքաղաքականության ձևավորում: | Ավարտված |
| 40 | «ՄՍՅՈ ԱԶՆԱՎՈՒՐ» ՖԻԼՄի ցուցադրություն ԿԻՆՈՅԻ ՏԱՆ ՄԵԾ ԴԱՀԼԻՃՈՒՄ | Հայաստանի կինոգործիչների միության | մշակութային ժառանգության հանրայնացում: | Ավարտված |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքները |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող <<Աստղերի պուրակի կառուցում>> միջոցառում | Հայաստանի կինոգործիչների միության հարակից տարածք | Ընթացքի մեջ | Աստղային պուրակում նոր մոտեցումներով հավերժացնել Հայ կինոյի 100-ամյա պատմությունը խորհրդանշող աստղերին, որոնց անունները մեր 100-ամյա կինոյի պատմության անբաժանելի մասն են:Ստեղծել մշակույթ և հիշողություն կրող միջավայր: | Հավերժացնելով հայ կինոյի մեծանուն արտիստների անունները և ստեղծելով հանգստի ու ժամանցի կրթական, մշակութային, զբոսաշրջային միջավայր, հատկապես երիտասարդությանը տալ տեղեկատվություն հայ կինոյի մասին, ծանոթացնել հայ կինոյի, նպաստել որ նրանք իրենց ժամանցն ու հանգիստն անցկացնեն մշակութային միջավայրում: |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 119,885,710 |

| | |
|---|---|
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 0 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | | |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 0 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 119,072,951 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 119,072,951 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 0 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | Բանկային ավանդների՝ ֆինանսական վարձակալությունից տոկոսային եկամուտներ | 43,033,467 | Կանոնադրական նպատակների գործառույթների իրականացում,Միության անդամների սոցիալական, քաղաքացիական, մասնագիտական, աշխատանքային, հեղինակային և խառը իրավունքների, ինտելեկտուալ սեփականության և օրինական շահերի պաշտպանություն |
| 2 | Վարձակալություն և ծառայությունների մատուցում | 74,135,342 | Կանոնադրական նպատակների գործառույթների իրականացում, Միության երիտասարդ անդամներին, կինոոլորտում ընդգրկված ուսանողներին անցնելու կրթական, ստեղծագործական վերապատրաստման, որակավորման, մասնագիտական գիտելիքների կատարելագործման գործունեության աջակցություն |
| 3 | Ապպահովագրության հատուցումից, ապրանքների մատակարարումից և այլ եկամուտներ | 1,904,142 | Կանոնադրական նպատակների գործառույթների իրականացում |
| 4 | Վարձակալություն | 812,759 | Մնացորդի տեղափոխում հաջորդ տարի, Միության անդամների սոցիալական, քաղաքացիական, մասնագիտական, աշխատանքային, հեղինակային և խառը իրավունքների, ինտելեկտուալ սեփականության և օրինական շահերի պաշտպանությանը, ստեղծագործական գործունեության համար պայմանների ստեղծում և բարելավում |
| Ընդամենը | | 119,885,710 | |

Նշումներ

Հաշվետվության 7-րդ կետում հանրային միջոցների հաշվին ,,Հայ կինոյի 100-ամյակը խորհրդանշող <<Աստղերի պուրակի կառուցում>> ,, ծրագրի իրականացումը երկարաձգվել է: Ծրագիրը իրականացվելու է 2025թ ընթացքում: 30 000 000 ՀՀ դրամ ստացված դրամաշնորհի օգտագործումը/ծախսը/ կներառվի 2025թ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ մեջ:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________0________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________

ստորագրություն, անունը, ազգանուն